ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 21/02

14.01.2021թ

ք.Արտաշատ

ՀՀ Արարատի մարզպետարանը, ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Ա. Մկրտչյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա /այսուհետև Նվիրատու/ մի կողմից և ՀՀ Արարատի մարզի Պարույր Սևակի տուն-թանգարան ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Սևակ Ղազարյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա /այսուհետև Նվիրառու/ մյուս կողմից, հիմք ընդունելով «2021թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով պատվիրատուն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վերապահված լիազորությունները պատշաճ կատարելու նպատակով, կատարողին տրամադրում է 9282,1 ինն միլիոն երկու հարյուր ութսուներկու հազար հարյուր ՀՀ դրամ «2021 թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի բյուջետային ծախսերի (ըստ դասիչների) 1075 ծրագրի «Մշակութային ժառանգության ծրագիր» 11004 «Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ» հատկացումներն օգտագործել «Պարույր Սևակի անվան տուն թանգարան» ՊՈԱԿ-ի 2021թ. հաստատված ծախսերի նախահաշվին համապատասխան:

2. Նվիրատուն վճարումները իրականացնում է ՀՀ պետական բյուջեով հաստատված եռամսյակային համամասնությունների շրջանակներում:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Սույն պայմանագրով սահմանված պայմանների չկատարման դեպքում կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր համաձայնագիր կնքելու միջոցով:

3.2 Սույն պայմանագիրը իրավաբանական ուժ է ստանում կնքման պահից և գործում է մինչև 2021 թվականի դեկտեմբերի 25-ը:

3.3 Սույն պայմանագիրը կազմված է մեկ էջից, գրված է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 4. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՆՎԻՐԱՏՈՒ | ՆՎԻՐԱՌՈՒ |
| --- | --- |
| ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ | Պարույր Սևակի տուն-թանգարան |
| ք. Արտաշատ, Օգոստոսի 23/60 | ՀՀ ֆինանսների նախարարության գ/վ |
| Ֆին. նախ. Գործառ. Վարչ. | Հ/Հ 900428000278 |
| 900411068027 | ՀՎՀՀ 04105615 |
| | Տնօրեն |
| Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող | |
| ________ Ա. Մկրտչյան | ________ Ս. Ղազարյան |
| ստորագրություն | ստորագրություն |
| Կ.Տ. | Կ.Տ. |